




ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՆՁԻ ԵՎ ԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ

Անցյալ գիշեր սրահին մեջ երգելով ու քարքառելով, գվարճաբանելով, երբեմն ալ միշտ հանկուցանելով՝ Հայաստան ուխտագնացության տարիք գտեց. կամ լավ ևս է ըսել քիչ մը Հայաստան բերիք՝ Եգիպտոսի հայերու... դուք Մասիսն ու Արագածը փոխադրեցիք հոս պահ մը. ո՛վ ըսավ, թե լեռները չեն քալեր...

Ի՞նչ հրաշարվեստ հուշարար մըն էք դուք նախնի ու արդի հայ գեղեցկությանը. լիափառ սիրով, բոլորանվեր ջանքով հետազոտեր, որոնք, ի քնար վերակոչեր եք մեր քաղցրադու, աստվածաշունչ մեղեդիներն ու օրհներգությունները, որոնց մեջեն մեր սուրբ նախնյաց հոգիները համբուրել տվիք մեզի: Հայ գեղջուկ բանաստեղծության կույս գեղեցկությունը պաշտել տվիք մեզի:

Ո՛վ վարպետ, վարդապետ, ի՞նչ բանի ավելի հիանամ ձեր մեջ, ձեր արվեստորէն ձայնի՞ն, թե գերանուրբ արվեստի՞ն, պատարուն գիտության՞ը, թե բոցաշեշտ պիտանախտության. հրապուրիչ բանախոսի՞ն... Ձեր համերգը այգու՝ «հավատամք» մըն է հայ ցեղին քարձրագույն ընդունելությանը ու անոր անհուն կատարելականության:



Կոմիտա վարդապետը մի խումբ գրողների
և արվեստագետների հետ

Մեզմե ո՛վ պիտի կրնա մոռնալ ելլեք հայրենիքի հոգեզվարճ այն տեսարանները,

գոր խոսքով ու երգով հեռապարզեցիք մեր գմայված աչքերում առջև, վստեղի ձեռքեր, վարպետ, ներդաշնակություն մեր է կատարյալ, գույն ու պեսայիություն ունի, խորություն ու մթնոլորտ ունի,—երկրի մթնոլորտը,—լույս ու ստվերներ ունի, Հաստատանը մեր լսելովքը... տեսանք մենք:

ՏԻԳՐԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ,

*
*
*

Կոմիտասի առաջին ու կարևորագույն գործը հայ երաժշտական ոճը վերագրած ըլլալն է:

Կոմիտաս վարդապետ եղավ առաջին հարազատ հայագույն դաշնակողը հայ երգի, և ատիկա իր կատարած գործին երկրորդ կարևոր կետն է:

Կոմիտաս վարդապետ հայ երաժշտական ֆոլկլորի, նույնիսկ արևելյան ֆոլկլորի, բանասեր-հավաքիչ մըն ալ եղած է, բացի նոր հայ երաժշտության մը ռաֆիկայի իր մեծ դերեն:

Կոմիտաս արտակարգ երգիչ էր, հայ երգին մեր օրով մեծագույն արտահայտիչը:

Կոմիտաս եղավ հայ երաժշտության մեծ պրոպագանդիստը, առաջալը օտարներուն մոտ և հայոց իսկ համար:

Կոմիտաս եղած է խանդավառ ուսուցիչ մը և արտակարգ խումբ կազմող ու վարող մը:

Կոմիտասի ճոխ անձնավորության մեջ ամենակարևոր տեղերեն մին կեննե գիտուն ուսումնասիրողը:

Կոմիտաս, վերջապես, ստեղծագործ երաժիշտ էր և ոչ թե միմիայն հավաքող ու դաշնակող ինչպես ոմանք կկառնեն:

Ա. ԼՈՂՈՆՅԱՆ

*
*
*

Տեսե՛ք եք նրան իր կյանքի ու գործի մեջ, լսե՛ք դուք երբևէ նրա երգեցիկ խոսքի համերգը կամ իր՝ մեծ վարպետի «հեներալ» «Մոկաց Միրզեն», «Միրոս Անան Էր» և նման ժողովրդական սքանչելի ստեղծագործությունների կատարումը—երկարաշունչ, թախծալի, բայց և թովիչ, և հոգեզմայլ: Ով էլ որ լինեիր դու, չէիր կարող գրնե առժամ կտրվել քո առօրյայից ու հոգով ու սրտով չտեղափոխվել այնտեղ, ուր երկրագործ աշխատավորի հանճարն է երկնից այդ երգերը, ուր բախտից հալածված դարիքն է չարքաշ իր օրը սզացել և կամ «սուսապալ գեղջուկն» է իր հոգն ու վիշտը հառաչել արորին ու գութանին կոթնած:

Միջախառակ, միհար, ջղուտ և զգալուն, դեմքը դեղնավուն, աչքերը արտահայտիչ և վառվռուն, գլուխը ճաղատ, մորուքը ոչ «վարդապետավայել», այլ ծնոտի տակ միայն թողած, այսպես կոչված վագներյան, ինքը արագաքայլ և անհամբեր, միշտ շտապող, միշտ աշխատասեր, կյանքից գոհ, լավատես:



Կոմիտաս վարդապետի դիմաքանդակը՝ հանված մահվան օրը՝ նկարիչ Հ. Աճեմյանի ձեռքով

Այդպես էր Կոմիտասը... Չհայելով, ու նրա սեմյակը զարդարում էր գորգերով ու նկարներով, բայց ինքն՝ արվեստագետի ապրում էր, կարելի է ասել, սպարտանյան կյանքով, ուտելու մեջ պարզ և չափավոր, չէր խմում ու չէր ծխում, քնում էր գարուն թե ձմեռ բաց պատուհանով և, որ գլխավորն էր, պառկում էր ուղղակի հատուկ վրա, առանց ներքնակի ու քարձի: Նոսուգրության մեջ մաքրասեր էր, գրում էր գեղեցիկ, իր իսկ տողած թղթերի վրա, ազնվապես, որ նրա ձեռագրերից կարելի էր ուղղակի կլիշե պատրաստել:

Գ. ԼԵՎՈՆՅԱՆ

Կոմիտասը վեճում է հայ երաժշտության, հիմնաքարը: Կոմիտասը այն իմաստունն ստեղծագործողն է, որ մեծապես հասկացավ ժողովրդական աղբյուրների կենսալից ուժը և իր նյութը վերցրեց այնտեղից: Եվ ապա՝ Կոմիտասը այն երաժիշտը չէ, որին մենք սոսկական «արժանավորների հարկը» մատուցանելու համար միայն հարգանքի խոսք ասենք: Այսօր արդեն պարզ է ամեն էրաժիշտի համար, որ մեր ժողովրդական երգի վրա հիմնվող մեր երաժշտությունը Կոմիտասից է սկսվում:

Այսպիսով Կոմիտասն այն երաժիշտը եղավ, որ իմաստնաբար և հեռատեսորեն վճռական շրջադարձով լծակը ուղղեց դեպի աշխատավոր ժողովրդի երգի իբրև մեկնակետ ապագա հայ երաժշտության:

Դ. ԴԵՄԻՐՇՅԱՆ

Կոմիտասը միայն հավաքող չէ. ազգագրական ժողովածուն նրան չի բավարարում և ո՛չ էլ գիտական պեղումներն են նրան հագեցնում: Նա հանդես է գալիս իբրև մի նոր, կենդանի երաժշտության հիմնադիր, հենված հենց իր հավաքած ժողովրդական երգերի վրա:

Նրա այդ մեծ ու անզուգական գործը մնում է իբրև մի մոնումենտալ գործ համաշխարհային մասշտաբով...

ՍՊԻՐԻԴՈՆ ՄԵԼԻՔՅԱՆ

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ

ԿՈՄԻՏԱՍԻ ՀԵՏ

Կոմիտասը, ինչ խոսք, ինչպես բոլոր հանճարները, իրական մարդ է եղել: Բայց եթե շատ իրական լինեք, էլ ի՞նչ Կոմիտաս: Նա իր մեջ կրել է բնությունը: Դա մեր հողն է, հողի հոտը, համը, մեր ջուրը, սարերի օդը... Նա այդ բոլորը բյուրեղացնում է երգով: Իհարկե, այստեղ խոսքերը կարևոր չեն: Կարևորը երգն է, նրա երգի մեջ հենց այդ հողն ու ջուրն են զգում: Ուրեմն նա որքան ճիշտ է զգացել մեր գարունը: Մեր պ-



Կոմիտաս վարդապետի մահարձանը (Երևան)

մեն մի գարունը եղել է մութ տեղն ընկած մարդու դեպի լույս գնալու ճգնում: Ինչպե՞ս են Կոմիտասի մոտ ներդաշնակվում մութն ու լույսը: Լույսի զգացումը շատ ուժեղ է նրա մոտ, երգերը՝ անսահման լուսավոր:

Սարերն իրենց երգն ունեն: Այդ երգը գեղեցիկ է, ուժեղ: Ամպերը որքան ծածկում են սարերը, այնքան գեղեցկանում և ուժեղանում է այդ երգը: Կոմիտասը բնության